



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՅԱԶՈՂՈՒԹԵՄԲ ԱՄԱՐՏԵՑ ԻՐ ՅՐԴ ԸՆԹԱՅԻԿ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

- ԸՆՏՐՈՒԵՑԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԵՐԸ
- ԳՆԱՀԱՏԱՆՔ ԵՐԿՈՒ ՆՈՒԻՐԵԱԼ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ

Ամերիկայի Միացյալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի ՅՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ տեղի ունեցաւ Ուրբաթ, 14 եւ Շաբաթ, 15 Մայիսին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, Նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ հիւրընկալութեամբ Էնսիւնոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձութեան: Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներուն, Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներու կողքին, ներկայ էին Ազգային վարժարաններու հնամալ Մարմինի անդամներ, Ազգ. վարժարաններու տնօրէններ եւ այլ հրաւիրեալներ:

Նիստին բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ յետմիջօրէին, միացյալ աղօթքով: Առաջնորդ Սրբազանը յայտնեց, թէ յատուկ աղօթք պիտի բարձրացուի անցեալ մէկ տարուան ընթացքին մեր ունեցած կորուստերուն՝ Թեմիս ու Կաթողիկոսութեան ծառայող ննջեցեալներու հոգիներուն համար: Անոնց շարքին էին Ատրպատականի Թեմի Առաջնորդ Ս. Նշան Եպս. Թօփուզեան, Թեմիս Նախկին հոգեւոր հովիւներէն՝ Ս. Անուշաւան Բիւրջ. Արթիւնեան, Ս. Վաչէ Բիւրջ. Նազգաշեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տոքթ. Լեւոն Դաւթեան եւ Տարօն Աւետիսեան, Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներէն Նուպար Զօրպաճեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ բազմամեայ ծառայողներէն Ստեփան Գապատայեան, Ազգ. Վարչութեան Նախկին անդամներէն Ճան Շիրին եւ Գոլիվուտի ծիսական համայնքի նուիրեալ ծառայողներէն Միհրան Շաթոյեանը:

Առաջնորդ Սրբազանը ողջոյնի խօսք ուղղեց ներկաներուն եւ հրաւիրեց Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գոգշ. Ս. Վաղինակ Վրդ. Մելոյեանը, որպէսզի ընթերցէ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ ժողովիս ուղղուած օրհնութեան խօսքը:

Վեհափառ Հայրապետը կ'ողջուներ ժողովիս մասնակիցները, վեր կ'առնէր ծուխերու աշխուժացման եւ նոր հոգեւոր հովիւներու պատրաստութեան կարելորութիւնը, կը շեշտէր մեր դպրոցներուն մէջ հայեցի կրթութեան աւելի եւս զարգացման անհրաժեշտութիւնը, ապա, գնահատելէ ետք Առաջնորդ Սրբազանին ու Թեմիս զոյգ ժողովներուն աշխատանքը, յաջողութիւն կը մաղթէր Երեսփոխանական ժողովին:

Ժողովական կարգ մը ընթացիկ աշխատանքներէ ետք, նստաշրջանը ընթացք առաւ ողջոյնի խօսքերով: Յաջորդաբար խօսք առին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգիճեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան եւ հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Քիւնյ. Խաչատուրեան:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՊԱՏՎԱՄԸ

Ապա, իր պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը: Փառք եւ գոհութիւն յայտնելէ ետք Աստուծոյ, որ բոլորիս առիթը շնորհած է հասնելու Երեսփոխանական ժողովի այս հանգրուանին, ան երախտագիտութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, Թեմիս նկատմամբ անոր հոգածու վերաբերմունքին համար, նշելով, որ Նորին Սրբութեան ցուցմունքները ուղեցոյց կը հանդիսանան Թեմիս որոշ աշխատանքներուն, ինչպէս՝ Հայ Կնոջ Տարուան տօնախմբութեան թելադրանքը:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքի խօսք ուղղեց Թեմի զոյգ ժողովներուն, որոնք այսօր կ'ամբողջացնեն իրենց պաշտօնավարութիւնը, ապա ակնարկութիւն ըրաւ կարգ մը ընդհանրական հարցերու եւ հպարտառիթ իրագործումներու: Ան անդրադարձաւ տնտեսական տագնապին ու անոր հետեւանքներուն, զորս պիտի դիմագրաւենք գործակցութեամբ ու ի հարկին, բազմապատիկ ճիգով: Ան կանգ առաւ Նորահաս սերունդին հոգածութեան հրամայականին վրայ, որուն գծով, մեր Թեմը 2009 տարուան ընթացքին կարելորութեամբ կենսագործեց Վեհափառ Հայրապետի պատգամը, որ Տարին նուիրած էր երիտասարդութեան, աւելցնելով, որ այս հոգածութիւնն ու նախանձախնդրութիւնը միայն այդ տարիով չէ սահմանափակուած, այլ ընթացք առած էր նախընթաց տարիներուն ու պիտի շարունակուի յարաճուն թափով:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց Նորթ Հոլիվուտի ծխական համայնքի կազմակերպական կեանքին մէջ արձանագրուած յառաջդիմութիւնը, նկատել տալով, որ շրջանը առաջին անգամ ըլլալով իր ներկայացուցիչներով կը մասնակցի ժողովիս: Ան նաեւ գնահատանքով արտայայտուեցաւ եկեղեցական սեփական կալուածով մը օժտուելու Լաս Վեկասի համայնքին իրագործումին մասին: Ան կոչ ուղղեց, որ »նոր տասնամեակին նայինք ամուր եւ առողջ հիմերու վրայ վերակազմակերպուելու յանձնառութեամբ: Մեր հաւաքական կեանքի արդիականացումն ու նոր դրոյթներով կազմակերպումը ըլլան մեր նպատակակետերը. մեր աշխատանքի յառաջիկայ դաշտերուն նայինք մեր ունեցած արժէքները պահպանելու եւ անոնց վրայ նորեր աւելցնելու

մօտեցումով, ի խնդիր մեր եկեղեցւոյ պայծառացման, ի շահ մեր ազգին ու հայրենիքին:

«Գիտենք, որ մեր դիմաց կը տարածուին աշխատանքի ընդարձակ դաշտեր, գործող ձեռքերու կարիքը մեծ է. **«Յունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ: Յետեւաբար, խնդրեցէք հունձքի տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ դրկէ»:** Տէրունական այս խօսքը, սիրելիներ, այժմեական է մեզի համար, հոս, հայրենիքէն հեռու այս ակերուն, ուր կարիքները կ'աւելնան տարուէ տարի», եզրափակեց Առաջնորդ Սրբազանը, մաղթելով, որ Ժողովը յանձնառու մօտեցումով ու յաջողութեամբ յառաջ տանի իր աշխատանքը:

ԴԻՒԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ

Պաշտօնական խօսքերէն ետք, ժողովը ընտրեց իր մնայուն դիւանը: Ատենապետ ընտրուեցաւ Տիար Նազարէթ Ծատուրեան, իսկ ատենադպիր ընտրուեցան Տեարք Յրայր Ճերմակեան եւ Խաչիկ Թիթիզեան: Դիւանը ձեռնհասօրէն վարեց աշխատանքները:

Ծխական շրջաններու հոգաբարձութեանց ատենապետները կամ ներկայացուցիչները տուին հակիրճ գեկուցումներ՝ իրենց տարեկան աշխատանքին, իրագործումներուն, մտահոգութիւններուն եւ ծրագիրներուն մասին:

Օրակարգի յաջորդ կետերուն լուծումէն առաջ, Առաջնորդ Սրբազանը յայտարարեց, որ վերջին տարիներուն, Ազգ. Երեսփոխանական Ժողովին առիթով հաստատուած է բարի ակնհայտութիւն մը. ժողովին ընթացքին, պատիւի ու գնահատանքի կ'արժանանայ Թեմիս երկարատեւ ու կամաւոր նուիրեալ ծառայութիւն մատուցող ազգային մը:

Այս տարի, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութիւնը այս գնահատանքին արժանի նկատած էին երկու նուիրեալ ծառայողներ: Անոնք են Ս. Խաչ Մայր Տաճարի քարտուղարուհի Օր. Վրէժուհի Սարգիսեանը եւ Լաս Վեկասի ծխական յանձնախումբի ատենապետ Տիար Ատրուշան Արմէնեանը, առ ի գնահատանք՝ Թեմիս եւ ծխական յիշեալ շրջաններուն իրենց նուիրեալ ծառայութեանց: Օր. Վրէժուհին պարգեւատրելու գաղափարը կապ ունի այն իրողութեան հետ, որ 2010 տարին հռչակուած է Յայ Կնոջ Տարի:

Առաջնորդ Սրբազանն ու զոյգ ժողովներու ատենապետները կատարեցին յուշանուէրներու յանձնումը:

Ազգ. Երեսփոխանական Ժողովը այնուհետեւ հանգամանօրէն եւ ըստ երթեան քննարկեց Առաջնորդ Սրբազանին ու զոյգ ժողովներուն միամեայ գործունեութիւնը: Ստանալէ ետք յաւելեալ լուսաբանութիւններ ու բացատրութիւններ, ժողովը «Յոյժ գնահատելի» գտաւ տարուած աշխատանքը:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿԱԶՄԵՐՈՒՆ

Ազգ. Երեսփոխանական Ժողովի երկրորդ օրուան նիստերը յատկացուած էին յառաջիկայ տարուան ծրագիրներու մշակման:

Քննարկումներն ու առաջարկները բաժնուած էին աշխատանքի գանազան կալուածներու եւ գլուխներու տակ, ինչպէս՝ քրիստոնէական դաստիարակութիւն, կրթական մարզ, նոր հոգեւոր հովիւներու պատրաստութիւն, տնտեսական ծրագիրներ եւայլն:

Ժողովի աւարտին, տեղի ունեցաւ Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան նոր կազմերու ընտրութիւնը:

Կրօնական Ժողովի անդամ ընտրուեցան հետեւեալ հոգեւորականները.-

Գերայ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան

Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան

Արժանապատիւ Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան

Արժանապատիւ Տ. Նարեկ Զինյ. Փեղիւանեան

Արժանապատիւ Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան

Արժանապատիւ Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան

Արժանապատիւ Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան

Ազգային Վարչութեան անդամ ընտրուեցան հետեւեալ ազգայիները.-

Իրաւաբան Լեւոն Կիրակոսեան

Տիար Կարօ Էշկիեան

Տիար Խաչիկ Երեցեան

Տիար Վահրիճ Փիլաւճեան

Տիկին Ռիմա Պօղոսեան

Տիար Կարէն Բենեասեան

Տիար Վահան Պզտիկեան

Տիար Ճորճ Զօրպաճեան

Տիար Թորոս Յ. Զէչէճեան

Տիար Պիլ Սաաթճեան (Ֆրեզլոյէն)

Տիար Սագօ Շիրիքեան (Սան Ֆրանսիսքոյէն)

Առաջնորդ Սրբազանը յատուկ գնահատանք արձանագրեց շրջանաւարտ վարչականներուն, յատկապէս այն անդամներուն, որոնք վերընտրելի չեն: Ան նաեւ գնահատանք արձանագրեց դիւանին, որ յաջողութեամբ վարեց ժողովը:

Ֆրեզլոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ հոգաբարձութիւնը պատրաստակամութիւն յայտնեց հիւրընկալելու յառաջիկայ տարուան Ազգ. Երեսփոխանական Ժողովը:

Փակման խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատանք արձանագրեց ժողովականներուն, անհրաժեշտ նկատեց, որ մեր հաւաքական կեանքի աշխատանքները՝ եկեղեցւոյ ու ազգի ծառայութիւնը շարունակուի սիրով, փոխադարձ յարգանքով ու հանդուրժողութեամբ, որովհետեւ բոլորիս նպատակն է իրականացնել մեր եկեղեցւոյ յառաջդիմութիւնը: Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց նորընտիր կազմերը, եւ անոնց մաղթեց յաջողութիւն՝ իրենց ծառայական առաքելութեան մէջ:

Նիստը փակուեցաւ Առաջնորդ Սրբազանին աղօթքով: Ներկաները երգեցին «Կիլիկիա»ն եւ Հայաստանի Թայլերգը:

PRELACY 38TH REPRESENTATIVES ASSEMBLY CONCLUDES WITH ELECTION OF NEW RELIGIOUS AND EXECUTIVE COUNCILS

The 38th Prelacy Representatives Assembly convened at the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall on Friday, May 14th, 2010, and concluded on the afternoon of May 15th. The Assembly was presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was hosted by Holy Martyrs Church on Encino, with the participation of delegates, clergy members, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Board of Regents members, principals, and invited representatives.

The Assembly opened on Friday afternoon with the invocation by the Prelate, during which prayers were offered in memory of those who entered eternal rest in the past year, among them Prelate of Tavriz H.G. Bishop Neshan Topouzian, retired Prelacy priests Archpriest Fr. Anoushavan Artinian and Archpriest Fr. Vatche Naccashian, Central Executive Council members Dr. Levon Davtian and Mr. Daron Avedissian, delegate Mr. Noubar Chorbajian, long-time servant of St. Mary's Church Mr. Stepan Kabadayan, former Executive Council member Mr. John Shirin, and long-time servant of St. Garabed Church Mr. Mihran Chatoyan.

His Eminence then invited pastor of St. Gregory Church of San Francisco Very Rev. Fr. Vaghinag Meloian to read the message of H.H. Catholicos Aram I. In his message His Holiness stressed the importance of strengthening parishes, preparing new clergy, and strengthening Armenian education in our schools, and after commending the endeavors of the Prelate and Councils during the past year wished success to the Assembly's proceedings.

Welcoming remarks were then delivered by Mr. Khajag Dikijian, Chairman of the Executive Council Dr. Garo Agopian, and pastor of the host parish Rev. Fr. Razmig Khatchadourian.

The Prelate then delivered his message, first and foremost giving thanks to God for granting another year to serve our church and community, and expressing his thanks to His Holiness for his guidance and care. He continued to give a general overview of the activities of the past year, calling attention to some of the realities of the past year such as the global recession, which affected the Prelacy and parishes as well, and noteworthy accomplishments. The Prelate noted that one of the most important aspects of the Prelacy's mission is the educating and spiritual nurturing of our youth, and that we are more committed than ever to engaging our youth in our church and community life. His Eminence then reflected on the accomplishments in the past year with regards to our newer parishes, such as the North Hollywood parish elected its first Board of Trustees and delegates, and the purchasing of a property by the Las Vegas parish which will soon house a church and cultural center.

Finally, the Prelate noted that with each passing year the Prelacy's realm of service expands to meet the ever changing needs of our communities and thus, "as we embark on a new year of service, let us look to moving forward and not be satisfied with the status quo. Let us think outside the box, welcoming new ideas and new modes of operation in order to experience unprecedented successes and secure a brighter future for our church and our nation". In the words of our Lord, "The harvest is plentiful, but the laborers are few", the Prelate concluded by stating "It is our duty to be good laborers, to participate in the activities of our church, and to selflessly dedicate ourselves to serving our church with compassion and love. The Armenian Church is established on a strong foundation, based on the Christian virtues of faith, hope, and love. It is up to us to ensure that the foundation remains solid with our devotion to our Christian faith and our active participation in the mission of the Armenian Apostolic Church".

The election of the permanent divan followed with Mr. Nazareth Sadorian elected Chairman and Mr. Herair Jermakian and Mr. Khatchig Titizian as Secretaries.

The Chairman or representative of each Board of Trustees was then invited up to present a brief report of their parish's activities.

It has become a tradition during each Representatives Assembly to honor and commend a devoted servant of one of our parishes. This year, two individuals were honored. Given that this year we celebrate the Year of the Armenian Woman, one of the honorees was years-long secretary of Holy Cross Cathedral Ms. Verjouhi Sarkissian. Accepting the plaque on her behalf were the pastors and Board of Trustees Chair of Holy Cross Cathedral. The other honoree was Chairman of the Las Vegas parish Mr. Adroushan Armenian, who was commended for his part in the advancements the parish has experienced in a relatively short time.

The second session focused on financials, briefings by the Board of Regents and Religious and Executive Councils, and a discussion on the merit of the annual activities of the Prelate and Councils, which the Resolutions Committee found to be "highly commendable".

The Assembly re-convened on Saturday morning. During the first session, the activities of the Councils for the forthcoming year were drafted with regards to Christian Education, our parishes, new clergy preparation, and schools-educational. The 2010-2011 budget was also presented and approved.

The election of the Religious and Executive Councils took place during the second and last session of the day, with the following results:

Religious Council

Very Rev. Fr. Muron Aznikian
Very Rev. Fr. Barthev Gulumian
Archpriest Fr. Vicken Vassilian
Rev. Fr. Nareg Pehlivanian
Rev. Fr. Vazken Atmajian

Rev. Fr. Razmig Khatchadourian
Rev. Fr. Ardak Demirjian

Executive Council

Mr. Levon Kirakosian, Esq.
Mr. Garo Eshgian
Mr. Khatchig Yeretjian
Mr. Vahrij Pilavjian
Mrs. Rima Boghossian
Mr. Kahren Beniasian
Mr. Vahan Bezdikian
Mr. George Chorbajian
Mr. Toros H. Kejejian
Mr. Bill Sahatdjian
Mr. Sako Shirikian

Following the elections, the Prelate expressed his thanks to the outgoing Councils' members for their service and contributions during their term.

Prior to the close of the session, representatives of Holy Trinity Church expressed their readiness to host next year's Assembly in Fresno.

Concluding remarks were delivered by the Prelate during which he commended the delegates and all the participants for their input and suggestions, stressed the importance of cooperation and collaboration as we embark on the activities of the forthcoming year, and wished success to the new Councils.

The Assembly officially came to a close with the benediction and the singing of the Cilician and Armenian national anthems.